ENVER KONUKÇU. Selcuklulardan Cumhuriyete Erzurum. Ankara, 1992, 974 s.

ԷՆՎԵՐ ԿՈՆՈՒԿՉՈՒ. *Էրզրումը սելջուկներից մինչև Հանրապետություն. Անկարա, 1992, 974 էջ։*

Սույն աշխատության համար հեղինակը նյութեր է հավաքել Լոս Անջելեսի, Նյու Յորքի, Փարիզի, Լոնդոնի, Մոսկվայի, Բաթումի, Թիֆլիսի գրադարաններից և անշուշտ թուրք հեղինակների գրքերից։ Հենց սկզբից նշենք, որ աշխատությունը գրված է ազգային ուղղության դիրքերից, որը համաթուրքական գաղափարախոսությունից տարբերվում է ընդամենը մի բայլով։ Կուկենայինք հատուկ ընդգծել, որ հայ-թուրքական պատմական առնչություններին վերաբերող հարցերին անդրադառնալիս, թուրք պատմաբանների բացարձակ մեծամասնությունը ունի միատեսակ թշնամական մոտեցում, որի հիմքում ընկած է բացահայտ ենթադրությունը։

Աշխատությունը բաղկացած է ներածությունից և 15 բաժիններից (գլուխներից), ուր քննարկվում են հայոց պատմության հետ անմիջական աղերսներ ունեցող հետևյալ հիմնահարցերը՝ սելջուկյան արշավանքները, սալտուկյան իշխանությունը Փոքր Ասիայում, Բարձր Հայքը իլխանների ժամանակաշրջանում, Թիմուրի արշավանքները Հայաստան և Փոքր Ասիա, Թուրքմենական տիրապետության ժամանակաշրջանը և, ի մասնավորի, Բարձր Հայքի նվաճման պատմությունը օսմանցի-թուրքերի կողմից։ Առանձին գլուխներում բավական տեղ է հատկացված XVII—XIX դդ. Օսմանյան կայսրության պատմության կարևորագույն գրվագներին, ներառյալ նաև երկու թանզիմաթները։ Ընդարձակ երկու գլուխներ են նվիրված (էջ 289—419) սուլթան Աբդուլ Համիդ II-ի և իթթիհատականների ժամանակաշրջանի Օսմանյան կայսրության պատմությանը՝ յուրովի մեկնաբանելով XIX դարի վերջի արևմտահայ ազատագրական պայքարի, հայոց ցեղասպանության հարցերը։ Աշխատությունն ավարտվում է 1920 թ. Մոսկվայի ու Կարսի պայմանագրերի կնքմանը և 1923 թ. Թուրքական Հանրապետության հռչակմանը վերաբերող նյութերով։

Որոշ իմաստով հավելվածի տպավորություն են թողնում 12—15-րդ գլուխների նյութերը, ուր ընթերցողին են ներկայացվում եվրոպացի ուղևորների վկայությունները Բարձր Հայքի ու նրա մայրաքաղաքի՝ Էրզրումի մասին (էջ 421—470), ռուս-թուրքական պատերազմների պատմությունը (էջ 471—696), Կարինի հայոց պատմությունը (էջ 697—751) և վերջապես՝ Թուրքիայի քաղաքական պատմությունը Մուդրոսի դինադադարից մինչև Հանրապետության հռչակումը (էջ 753—952), որի դգալի մասը վերաբերում է հայ-թուրքական հարաբերություններին։

Յուրաքանչյուր գլխի վերջում տրված է համապատասխան աղբյուրների ու գրականության ցանկը, սակայն նյութի բուն շարադրանքի ժամանակ ուղղակի հղումներ չեն արվում, հետևաբար մեծապես կաղում է գիտական ապարատը։ Հեղինակի կողմից օգտագործվել են գերազանցապես Հրանտ Անդրեասյանի կողմից թուրքերեն թարգմանված միջնադարյան հայ որոշ պատմիչների երկասիրությունները։ Մերթ ընդ մերթ հիշատակվում են նաև առանձին հայ հեղինակների ուսումնասիրություններ։

Ներածականում, անդրադառնալով արևմտյան հոների՝ Բալկանների և Կովկասի վրայով Փոքր Ասիա թափանցելու մասին աղբյուրներում պահպանված կցկտուր տեղեկություններին, հեղինակը ձգտում է այն տպավորությունը ստեղծել, թե Փոքր Ասիայի տարածքը թուրքացված էր մինչև սելջուկների արշավանքը։

Հետևելով սելջուկյան ժամանակաշրջանի պատմությունն ուսումնասիրած արդի թուրք պատմագրության ներկայացուցիչներ Մ. Յընանչի, Օ. Թուրանի ու այլոց տեսակետներին, հեղինակը փառաբանում է սելջուկյան Ալփ-Արսլանի խորագործությունները և սելջուկներին գիտում որպես հայերի «փրկարարներ»՝ հատուկ նպատակով շափաղանցելով հայ-բյուզանդական դավանաբանական վեճերը։ Անշուշտ գիտակցաբար ոչ մի խոսք չի ասվում սելջուկ հորդաների Հայաստանում կատարած սպանդի ու ավերածությունների մասին, թեև հայ աղբյուրներից մեջբերված առանձին վկայությունները հակառակն են հուշում ընթերցողին։

Երբ սելջուկյան տիրակալ Մելիք շահի մահից հետո սելջուկյան հսկայածավալ պետությունը տրոհվեց առանձին մասերի և Փոքր Ասիայի տարածքում, Հայաստանում և Անդրկովկասում առաջացան մի շարք թյուրքական էմիրություններ (իշխանություններ), ապա ընթերցողին հեղինակի հրամցրած նյութերից այն տպավորությունն է ստացվում, թե Փոքր Ասիայի ու Հայաստանի տարածքն արդեն, վերջնականապես ամբողջովին թյուրքացված է և, հետևաբար, հայերի ու Հայաստանի մասին ընթերցողը, որքան էլ ձգտի, չի կարող որևէ, թեկուզ աննշան, տեղեկություն ստանալ, կարծես նման երկիր պատմության մեջ չի էլ եղել։ Ճշմարտությունն այն է, որ ոչ միայն հեղինակի հիշատակած ժամանակաշրջանում, այլև հետագայում հայերը, չնայած քաղաքական վայրիվերումներին, կազմում էին Հայկական լեռնաշխարհի բնակչության բացարձակ մեծամասնությունը։ Հանրահայտ է ֆրանսիացի հայտնի ճանապարհորդ ժան Բատիստ Տավերնիեի վկայությունն այն մասին, որ «...Թոխատից մինչև Թավրիզ երկիրը բնակեցված է հայերով» և որ «հիսուն հային ընկնում է մի մահմեդական»[1]։ Հայերի իրենց բնօրրանում գոյության մասին հեղինակը սկսում է հիշատակել, երբ այս երկրի մեծագույն մասում հաստատվում է օսմանյան տիրապետությունը, որն, իբր, իր հետ բերեց «երջանիկ» իրավակարգ, ապահովելով յուրաքանչյուր հպատակի պատիվը, ունեցվածքը և անձը։ Եվ բոլորովին էլ պատահական չէ գրքում ամբողջությամբ զետեղված 1540 թ. օսմանյան կանոնագիրքը (օրինամատյանը, էջ 158—166)։ Հայկական նահանգներում, որոնց թվում էրզրումում, համարյա միշտ առօրյա կյանքում չեն կիրառվել այդ օրենքները։ Տիրապետողը եղել են թուրք փաշաների սանձարձակ կամայականությունները։ Այնուհետև, երբ հեղինակը խոսում է XVI—XVII դդ. Հայաստանի տարածքում տեղակայվող թուրք-իրանական պատերազմների մասին, ապա համարյա միշտ երկրի ավերածության մեջ մեղադրում է միայն իրանական կողմին (էջ 171)։

Հետաքրքիր են հեղինակի դատողությունները XIII—XIX դդ. եվրոպացի հեղինակների վկայությունների վերաբերյալ. «Երբ մենք [եվրոպական] ուղեգրություններին հայացք ենք գցում,—գրում է նա,—ապա տեսնում ենք, որ էրզրումի և Արևելյան Անատոլիայի համար նրանք օգտագործում են հետևյալ տեղանունները. Հայաստան, Թուրքոմանիա, Լևանտ, Եփրատի ակունքներ, Թրքահայաստան, Բարձր Հայք, Փոքրասիական Թուրքիա, Էրզրումի վիլայեթ, Էրզրումի էյալեթ, Արևելյան վիլայեթ, Երեք վիլայեթներ, Վեց վիլայեթներ կամ The six Armenian Provinces և այսպիսով երևվում է, որ Արևմուտքի գիտնականները անգիտանում են Արևելյան Անատոլիայում (իմա՝ Հայաստանում—Մ. Զ.) և Էրզրումում հիմնադրված իշխանական, սուլտանական և տոդայական, կարակոյունլու և ակկոյունլուների, սեֆյանների և օսմանցիների պետական միավորումները»։

Հայ ընթերցողի համար աշխատության առավել հետաքրքիր մասերը ռուս-թուրքական պատերազմներին նվիրված և «Հայերը էրզրումում» գլուխներն են։ Ճշմարտության դեմ չմեղանչելու համար նշենք, որ և՛ 1828—1829 թթ., և՛ Ղրիմի, և՛ հատկապես 1877—78 թթ. պատերազմների ընթացքի, այդ խոշոր քաղաքական իրադարձությունների շուրջ ծավալված դիվանագիտական պայքարի, հայերի մասնակցության և այլ բազմաթիվ հարակից հարցերի շուրջ աշխատության մեջ բերվում են արժեքավոր նյութեր, որոնց օգտագործումը, կարծում ենք, օգտակար կարող են լինել XIX դարի հայոց պատմությամբ զբաղվող մասնագետների համար։

«Հայերը էրզրումում» խորագիրը կրող ընդարձակ գլխում հեղինակը, հետևելով արդի թուրք պատմագրության մեջ արմատավորված տեսակետներին, տալիս է հայոց և, ի մասնավորի, Բարձր Հայքի հայոց պատմության հին և միջին դարերի մասին հետևյալ «վկայությունները». «Հայերի ծագումը աղջամուղջի մեջ է թաղված. (արևմտյան) պարսիկները և հույները նրանց անվանում են արմենոյներ (armenoi). Նրանք իրենք իրենց հայհայք են անվանում, իսկ իրենց ապրած երկրամասը՝ Հայաստան։ Պատմական ասպարեզում նրանք հանդես են գալիս ուրարտացիներից հետո և ապրել են որպես Մեդիայի և Պարսկաստանի գերիշխանության տակ գտնվող փոքրիկ մի համայնք։ Մ. թ. ա. 301 թ. նրանք սելևկյանների մի մասն էին կազմում։ Տիգրան II-ի (մ. թ. ա. 97—56 թթ.) ժամանակ հասել են իրենց հզորության գագաթնակետին։ Սուրբ Գրիգոր Լուսավորիչը հայերին քրիստոնյա դարձրեց։ 300 թ. քրիստոնեությունը պետական կրոն հռչակվեց։ Բյուզանդա-սասանյան հակամարտությունների ժամանակ նրանք գերադասում էին մերթ մեկի և մերթ մյուսի գերիշխանությունը։ Սելջուկների, սալ-

[1] Les six voyages de Jean Baptis'e Tavernier, vol. I, Paris, 1713, p. 79.

թուկյանների, մոնղոլների, իլխանների և ակկոյունլուների ժամանակ նրանք աչքի ընկան որպես առանձին համայնքներ։ Սելջուկների հալածանքներին հակառակ նոանք օսմանցիների բարյացակամության ներքո կարողացան պահպանել իրենց գոյությունը։ Եվ մասնավորապես առևտրի և արհեստների բնագավառում թուրքերի հետ կողք-կողքի գործունեություն ծավալեցին։ Հայերը Երզրումը Կարին էին անվանում և վկայություններ կան, որ նրանք վրացիների հետ միասին քաղաքում և որոշ գյուղերում բնակվել են... Սրանց կրոնական պատությունններին ոչ միայն նրբեր չի միջամտվել, այլ ապահովվել է [թուրքական պետության կողմից]»։

Էնվեր Կոնուկլուն հայոց պատմության յուրահատուկ այս շարադրանքի մեջ եզակի չէ։ Նա փաստորեն կրկնում է արդի թուրք պատմագրության բոլոր ուղղությունների ներկայացուցիչների հայեցակետը. այն է՝ հայերը իրենց ողջ պատմության ընթացքում ինքնուրույնությունից զուրկ, փոքրաթիվ մի համայնք են եղել, իսկ Հայաստան կոչեցյալ երկիրն էլ լոկ մի աշխարհագրական հասկացողություն է։

Իր աշխատության մեջ է. Կոնուկլուն զգալի տեղ է հատկացնում Երզրումի հայերի 1829 թ. գաղթին դեպի Ջավախք։ Դա տեղի ունեցավ, հեղինակի կարծիքով, ոչ թե անտանելի թուրքական դժոխքից ազատվելու նպատակով, այլ ռուսների «կեղծ բարոզչության» հետևանքով։

XIX դարի վերջում Հայաստանի տարբեր շրջաններում և մասնավորապես Արևմտյան Հայաստանում թուրքական դաժան բռնակալության դեմ ծայր առած հայերի ազգային-ազատագրական պայքարը հեղինակը համարում է բացառապես դրսից դրդված արհեստական մի երևույթ, բանի նման բայլի համար հայերը որևէ հիմք չունեին։ «Հայերը, իրենց նկատմամբ եղած ամեն տեսակի բարյացակամ վերաբերմունքին հակառակ,—կարդում ենք հեղինակի մոտ,— արտաքին ուժերի կողմից դրդված օսմանյան կառավարության դեմ ապստամբի ուղի բռնեցին։ Գաղտնի կազմակերպությունների օգնությամբ, նրանք սկսեցին Արևելյան Անատոլիայում երևակայական մի Հայաստան ստեղծելու ջանքեր թափել...։ Իրենց նպատակները իրականացնելու ճանապարհին, նրանք սկսեցին դենք ու դինամիտը հավաքել։ 1881 թ. Երզրումում հիմնադրվել է «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը, որը սատարվել է Կ. Պոլսի պատրիարք Ներսես Վարժապետյանի կողմից» (էջ 724—725)։ Ինչպես արդի թուրք պատմագրության մյուս ներկայացուցիչները, այնպես էլ է. Կոնուկլուն, դիմելով վիճակագրական տվյալների, փորձում է ամեն կերպ նվազեցնել հայ բնակչության թվաքանակը։

Կուզենայինք կանգ առնել Հայոց Մեծ եղեռնի մասին հեղինակի «լուսաբանությունների», «դատողությունների» վրա, որ, ի դեպ, արդի ողջ թուրքական պատմագրության ընդհանուր հայեցակետն է։ Երբ սկսվեց Առաջին Համաշխարհային պատերազմը,—գրում է է. Կոնուկլուն,—ռուսները որոշեցին... հայերին իրենց նպատակների իրագործման համար օգտագործել։ Պատերազմի ընթացքում հայերից կազմված չեթեները (հայդուկները) բանակին պետք է հարվածեին թիկունքից և, այդպիսով, ոչնչի օգնած լինեին ռուսներին։ Հայերը, բանակի կացության և տեղաշարժերի մասին ռուսներին տեսական տեղեկություններ հաղորդելու նպատակով, Տրապիզոնում և Երզրումում առանձին լրտեսական կենտրոններ ստեղծեցին։ Բացի այդ, օսմանյան բանակում ծառայող հայ զինվորներն էլ փախուստի դիմեցին և հավաքվեցին Կաղզվանում։ Ռուսները նրանց անմիջապես զինեցին։ Ստեղծվեցին նաև կամավորական զորաջոկատներ։ Սրանք, քաջ տիրապետելով թուրքերենին, անցնում էին ճակատի ողջ երկայնքով և բարենպաստ պայմաններում գիակապտությամբ լին զբաղվում։ Հայկական գյուղերում ևս քարոզչության միջոցով կարողանում էին իրենց համար հուսալի հենարան ստեղծել։ Ցարի զորակալներին կարճ ժամանակամիջոցում հաջողվեց ողջ հայությանը հավաքել ռուսական հովանու ներքո։ Ի դեպ, քարոզչությունը դուրս չէր գալիս նախկին մեթոդների շրջանակներից. այն է՝ խոստացվում էր ստեղծել Երզրում մայրաքաղաքով «Հայկական պետություն»։

Հեղինակը ընթերցողին հրամցնում է «տեղահանման» ժամանակ Հայերի անձի ու գույքի ապահովման մասին թուրքական կառավարության ձեռնարկած միջոցառումների վերաբերյալ մեր օրերում լայնորեն տարածված առասպելը։ «Սակայն ցավալի է,—գրում է է. Կոնուկչուն,—որ տեղահանման ժամանակ աքսորյալները ենթարկվել են ավազակախմբերի հարձակմանը, որի հետևանքով նրանց մի մասը տուժել է։ Սակայն դա ցեղասպանություն համարել չի կարելի» բացականչում է է. Կոնուկչուն։ «Այսօր էլ հայերը,—կարդում ենք նրա մոտ,—այսպես կոչված ցեղասպանության մասին են խոսում և առաջ են քաշում 1.500.000 զոհերի մասին, սակայն նման ոլորտները զուտ մտացածին են և համաձայն օսմանյան վավերագրերի նման երևույթ առհասարակ տեղի չի ունեցել»։

Խոսելով 1916—1918 թթ. մասին, է. Կոնուկչուն կեղծում է պատմական փաստերը։ Այստեղ էլ հեղինակը նորություններ չի ասում։ Դեռևս 1970-ական թվականներին, երբ Միտհադ Սերտօղլուն սկսեց հրատարակել «Թուրքիայի պատմության հանդես ըստ վավերագրերի» („Belgelerle Turk Tarih dergisi") պարբերականը, ապա նրա ամբողջ առանձին համարները լի էին նման պնդումներով։

Ամփոփենք։ Էնվեր Կոնուկչուի էրզրումի պատմությանը նվիրված այս ստվար հատորը ուշագրավ է առկա հետաքրքիր նյութերի ընդգրկմամբ, սակայն այն գրված է ազգայնական, համաթուրքական դիրքերից։ Աշխատության հակագիտական, հակահայկական, հակառուսական ուղղվածությունը ակնհայտ է, որ չի կարող նպաստել ժողովուրդների փոխըմբռնման ցանկալի նպատակին։

Մ. Կ. ՉՈՒԼԱՅԱՆ